ՀԱՇԻ

Ի նպաստ Թիւրքահայաստանի հայ տառապեալների

Հանգանակիչ Մասնաժողովի

Վերջին անգամ հրատարակված հաշուից յետոյ (տես «Մշակ» № 31, 13 փետրվարի 1909) Մասնաժողովը հետևեալ նուէրներն է ստացել. 1) «Գործի» խմբագրութիւնից՝ 4-րդ անգամ 400 ր., 2) Թիֆլիսում հ. Յովսէփ վարդապետ Մարգարեանից՝ 3., 3) «Գործի» խմբ. 5-րդ անգամ՝ 500 ր., 4) Բագուից տիկին Սոֆիա Լազարեան Մարտիրոսեանից՝ իր պսակադրութեան 20-ամեակի տօնման ծախքի փոխարէն՝ 100 ր., 5) Բագուից Ս. Ա. Վէրմիշեանից՝ «Бакинское Эхо», «Баку» թերթերի միջոցով հանգանակված 380 ր. 44 կ., 6) «Գործի» խմբագրութիւնից 6-րդ անգամ՝ 400 ր., 7) «Баку» թերթի միջոցով Ս. Աթաբէգեանի գործարանի ծառայողներից և բանուորներից 42 ր. 75 կ., 8) «Баку» թերթի միջոցով Բագուում հանգանակված ի նպաստ ոգանացիների՝ 166 ր. 96 կ., (9. «Մշակի» խմբագրութիւնից 8-րդ անգամ 500 ր., 10) «Մշակի» խմբագրութիւնից 9-րդ անգամ 200 ր., 11) Ասարախանի հայ հասարակութիւնից ուղարկած յանուն Ա. Մելիք Ազարեանի՝ 1851 ր., ընդամենը 544 ռ. 15 կ.։

Յունիսի 19-ին Մասնաժողովը փոխադրել է Կ. Պոլիս ռուսական դեսպանատան՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին յանձնելու համար, ի նպաստ Ադանայի և Հալէպի նահանգների հայ սովեալների, 400 օսմ. լիրա։

Մասնաժողովն իր գործունէութեան սկզբից մինչև 30 յունիս 1909 թ. հանգանակել է ընդամենը 19,936 ր. 92 կ.։

Ցիշեալ գումարից փոխադրել է Կ. Պոլիս ռուսական դեսպանատան միջոցով հայ տառապեալներին բաժանելու՝ 36,000 ֆրանկ և 400 օսմ. լիրա, որի համար վճարել է 17,189 ր. 05 կ., իսկ մինչև այժմ դիւանական և այլ մանր ծախք եղել է 277 ր. 86 կ., ընդամենը 17,466 ր. 91 կ. մնում է կանխիկ 2470 ր. 01 կ., որից 2377 ր. 20 կ.-ը պահւում է Թիֆլիսի Առևտր. Բանկում ընթացիկ հաշուով, իսկ 92 ր. 81 կ. գանձապահի մօտ։

Նուէրների ընդունելութիւնը շարունակւում է։ Խնդրվում է նուէրներն ուղարկել Մասնաժողովի գանձապահի հասցէով՝ Тифлисъ, контора А. И. Манташева и Ко. Аракелу Саруханяну, կամ Tiflis, Société Mantacheff C-ie, A. Saroukhan.